

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վարչապետ, Պետական Պաշտպանության Նախագահ Ռ. Քոչարեանի Մամլոյ Ասուլիսը

Գրեց ՅԱԿՈՒՄ ՊԱԼԵԱՆ

21 հոկտեմբերին, ժամը 10.15ին «Էնթերֆոնիթինան-թալ» պանդոկի սրահներէն մէկուն մէջ տեղի ունեցաւ պրն. Ռոպէր Քոչարեանի մամլոյ ասուլիսը: Հրաւերին ընդառաջած էին ֆրանսական թերթեր, տեղական եւ օտար մամլոյ գործակալութիւններ եւ հայ մամուլը:

Ասուլիսէն առաջ ներկաներուն բաժնուեցաւ տասընմէկ էջերէ բաղկացած հակիրճ տեսութիւն մը՝ զարաբաղեան հարցին վերաբերեալ:

Ապա, ասուլիսին բացումը ընելով ԼՂՀեան Ֆրանսայի եւ Եւրոպական համայնքի մօտ ներկայացուցիչը՝ Վարուժան Գրիգորեան ծանօթացուց վարչապետ Ռոպէր Քոչարեանը:

Կրագրողներու հարցումներուն պատասխանելէ առաջ, Ռոպէր Քոչարեան նկարագրեց կացութիւնը:

Լեռնային Ղարաբաղի անջատուած է Ատրպէյնանէն եւ անկախութիւն հռչակած՝ յարգելով հորհրդային Միութեան եւ միջազգային օրէնքները: Ատրպէյնան ուզած է ենթարկել Ղարաբաղը բռնութեամբ: Ղարաբաղը ունի ընտրուած իշխանութիւն, օրինաւոր մարմիններ:

Ղարաբաղ - Ատրպէյնան տագնապը կը տեւէ վեց տարիներէ ի վեր, հակամարտութիւնը ընդլայնած է իր դաշտը: Ճիգեր ի գործ կը դրուին «միջնորդ»ներու կողմէ: Փարիզի ժողովին ընդունուած ժամանակացոյցը մերժուած է Ատրպէյնանի կողմէ եւ ԼՂՀն ալ ներկայացուցած է սրբագրութեան փանի մը առաջարկներ:

Ռոպէր Քոչարեան բացատրեց լրագրողներուն որ եթէ մօտեցման եղանակը չփոխուի, հարցի լուծումը երկար կը տեւէ: Ղարաբաղի համար կան փանի մը հիմնական հարցեր, Ղարաբաղի իրավիճակը, շրջափակման վերացումը եւ անվտանգութիւնը, եւ այս հարցերը միաժամանակ պէտք է լուծուին այլ հարցերու հետ:

Հաստատուած զինադադարը կը յարգուի: Միջադէպերու պարագային, ուղղակի կապերով, կարելի եղած է առաջօր առնել բախումներու տարածման:

Ինչ կը վերաբերի Ատրպէյնանի հետ ուղղակի բանակցութիւններուն, անոնք տեւաբար յետաձգուած են զանազան պատճառներով, ընտրութիւն, իշխանութեան փոխանցում, եւ այլն:

Մինչեւ 25 հոկտեմբեր բանակցութիւն պէտք է տեղի ունենայ, այլապէս հաստատուած զինադադարը փխրուն կը դառնայ:

Ներկայ բազմաթիւ հարցումներուն պատասխանելով, Ռոպէր Քոչարեան ըրաւ կարեւոր նշումներ:

- Երբ ՄԱԿը Ղարաբաղը կը կոչէ Ատրպէյնանի շրջան, չի նպաստեր հակամարտութեան ֆաղափական լուծման եւ ժողովներու մեր մասնակցութիւնը թէական կը դարձնէ: Այս մտահոգութիւնները փոխանցուած են ՄԱԿի ֆարտուղարութեան եւ Մարիօ Ռաֆայէլիի:

- Ղարաբաղի մէջ ռուսական ուժ չկայ:

- Ատրպէյնանական գրաւուած շրջաններէն զօրքերու հեռացումը, շրջափակումը, գաղթականներու հարցը, Ղարաբաղի գրաւուած շրջաններէն Ատրպէյնանցիներու հեռացումը միաժամանակ պէտք է կարգադրուին: Միակողմանի զիջումները շահեկանութիւն չեն ներկայացներ մէկ կամ միւս կողմին համար եւ համաձայնութիւն չի գոյանար:

- Ռուսիա աւելի լաւ դիրքի մէջ է փան ուրիշ պետութիւններ, ուղղութիւն տալու համար հակամարտութեան լուծման:

- Մոսկուա յստակ յայտարարութիւն չէ ըրած ցարդ Ղարաբաղի իրավիճակի մասին:

- Լաչինի մարդասիրական միջանցքը կենսական է Ղարաբաղի համար որպէսզի բացուի դէպի արտաքին աշխարհ:

- Ֆրանսա ու Պելնիֆա ունեցած իր հանդիպումներուն անդրադառնալով, Ռոպէր Քոչարեան յայտնեց որ դեռ կանոնի է եզրակացութիւններ հանելու համար: Կարեւոր էր որ բացատրուէին զարաբաղցիներու նախաձեռնութիւններու դրդապատճառները:

- Միջազգային շրջանակները կ'ուզեն պահել նախկին բաժանումները: Հետեւաբար, ամէն բան կախում պիտի ունենայ ժողովուրդի տոկունութենէն:

- Թուրքիոյ որպէս իրաւարար եւ միջնորդ մասնակցութեան դէմ բողոքած են, բայց Ղարաբաղը չէ ընտրած այդ երկիրը միջնորդ խումբին որպէս անդամ:

Իրական մամլոյ ասուլիս մըն էր: Կ'ենթադրենք որ լրագրողները լուսաբանուեցան: Կ'արձագանգե՞ն: Այդ արդէն այլ խնդիր է: